


39th Amendment



891.99

q-67

01 JAN 2009

891.99

7-67 ԿՐ

6

ՕՂԱԿՆԵՐ

100/  
ԿԵԿ



ՅՈՒՆԱՆՆԵՐ ԳԻՒԼԻԱՆԴՎՆԵԱՆ

1/4 Կամոց եղան

20 MAR 2013

25615

ROS V

## ԳՐԱԴԱՐԱՆ

ՈՐԻՆ ԵՐԱԶԵՑԻ ԵՐԳԵՑԻ

ԵԿ ԳՏԸ

ՎԱՐԴԱՊԵՏԱԳՈՅՆ

Նկերառաւթ տպարան Մայր Աթոռութ  
1913

## ՄԻԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԻՐԱՀԱՐԲ

Նա մի մանուկ էր, երբ հանդիպեցինք:  
Անհոգ՝ որպէս թռչուն, պարզ՝ որպէս  
եթեր, վճիռ՝ որպէս բիւրեղ, զւարթ՝ ինչ-  
պէս գարնանային արևի ճաճանչ, գրաւիչ՝  
որպէս հիւսիսային փայլ:

Նրա մանկական գէմքին, շարունակ  
փայլում էր հրեշտակային անհոգ ժպիտը,  
որ վարդագոյն այտերի վրայ երջանկու-  
թեան, երազների և անմահութեան մշտըն-  
ջենական փոսիկներն էր գեղակերտում:

Հանդիպեցինք... պահ մի, վաղանցուկ  
երազի նման... իմ հոգին դարձել էր նրա  
յոյզերի չափը, իմ գէմքը՝ նրա հոգու հայե-  
լին: Նրա վիշտը տիրեցնում էր հոգիս. իսկ  
զւարթ տրամադրութիւնը արտացոլում էր

իմ ողջ էութեան մէջ, անդրադառում իմ  
դէմքից:

Սնցաւ թմրութիւնս, մոայլւեց ա-  
նուրջս և անորոշութիւնը շրջապատեց ինձ:  
Նա չկար և այլս չէի տեսնում նրան:  
Եւ ընկած սար ու ձոր, անթափանց  
անտառներում, հեռու մարդկային ժխորից  
փնտում էի նրան, փնտում անվերջ:

---

Ոսկեզօծ անտառը զարդարւած երփնե-  
րանգ տերեներով, աշնանային գուրեկան  
արևի ճաճանչների տակ, հովի գգւանքից  
մեղմ հեծկլառում, ողբում էր: Ես յանդուզն  
յամառութեամբ դեռ փնտում էի... Վեր-  
ջապէս տեսայ նրան:

Նստած զարկոր կաղնու տակ, դալուկ  
դէմքը ծածկած ձեռներով, լուռ, անշարժ  
հեծում էր: Ցուրտ քամին տարուբերում էր  
ոսկեգանգուր խոպոպիկները: Նա նման էր  
սզող դիցունուն, անտառի յաւէրժ վիշտնե-

Ծունկ խոնարհած, վշտահար դէմքս  
ցած ուղղած, խորհրդաւոր լուռութեամբ, ան-  
պատում վշտով, երկար, շատ երկար  
քարացել էի աստւածային տեսկերի ցնորդով:  
— Ի՞նչ ես ուզում ինձնից, թող ինձ...  
Ես միայնութեան սիրահարն եմ...

— Ուզում եմ մեռնել այստեղ, հիւծո-  
ւել քեզ մօտ, գառնալ օդ, գառնալ ոչըն-  
չութիւն. ես քեզ եմ փնտուել... Ես կեան-  
քի խելազարն եմ...

— Կողոպտեցիր ինձ, խլեցիր իմ ան-  
հոգութիւնը, անցեալի յուշերը հալածեցին  
ինձ մարդկութիւնից և թախիծը կնքեցին դէմ-  
քիս, և գարձեալ ասնջում ես իմ հոգին: Թող  
լինձ, ես ուզում եմ սպալ միայնութեան  
մէջ, ձայնակցել մեռնող անտառի ողբին...

Նա սկսեց հեծկլառալ. իսկ գունատ տե-  
րեները մեղմ շշուկով, վախկոտ վըսփու-  
կով իրար էին պատմում նրա վիշտը, սզում  
նրա հետ միասին:

— Իսկ ես, ես ինչ անեմ... թող գոնէ

քո մի հառաջը սպայ իմ մահը, քո մի ար-  
ցունքը ցօղի իմ սառը, անկենդան դիակը...

Քամին ոռնում էր, անտառը վայնա-  
սուն էր բարձրացնում, գիշերային անթա-  
փանց խաւարը պատել էր ամեն ինչ. իսկ  
նա զրկած իմ անկենդան դիակս սպում էր  
իմ մահը, որը իր մահն էր:

### ԿԵԱՆՅԻ ՈՒԽՏՈՒՐՈՒ

—Ես առանց քեզ անկարող եմ ապրել...  
Այդ գիտակցութիւնը խորապեց մահ-  
ան կուով կառուցած ամրոցս և վըր-  
դովեց իմ անդորրութիւնը:

—Քո ամեն մի ժպիտը, ես նկատում  
եմ հրեշտակի դէմքին, քո ձայնը եղեմա-  
կան մեղեդի է, քո հայացքը կեանք է, որի  
համար անվրդով կարելի է զոհել իմ և ու-  
րիշ հազարաւոր սովորական, տաղտուկ, ան-  
միտ կեանքեր: Ես զգում եմ իմ մէջ մի  
հուժկու յանդգնութիւն, մի ուժ, որով կա-  
րող եմ լեռներ քանդել, աւերել ամրոց-  
ները սաւառնել վեր, սահնալ դէպի անհա-  
սանելի եթերը և ամպերի բարձրադիր գա-  
հոյքից ցած բերել քեզ: Ես մասրում եմ  
անվերջ, տանջւում անխիղճ կերպով, օրե-  
րով փակւում սենեակում և կառուցանում

չլուած շքեղ ամբոցներ ջինջ, պարզ եթերից... Բայց յանկարծ ցնցւելով գայլոյթից, կատաղելով վաղրի պէս, անիծում եմ այն վարկեանը երբ, պատահեցի քեզ և չարախինդ հաճոյքով խորտակում եթերային ամբոցներս... ու քրքջում նրանց աւերակների վերայ:

— Այժմ, որպէս ուխտաւոր, անսահման երկիւղածութեամբ քեզ մօտ եմ հասել: Մինչդեռ ես ձգտում էի հասնել քեզ, իմ դիցունի, մինչդեռ տեհնչում էի լինել քեզ մօտ, չնչել քեզ հետ միասին, զգում էի որ կեանքս ունի նպատակ և այդ նախատակի համար արժէ ապրել: Այժմ հասել եմ իմ անուրջների ոգուն, այժմ քեզ մօտ եմ: Իմ մէջ չքացել, անյայացել է ինչ որ մարդկային է և մնացել է միայն մի անբիծ մաքրութիւն, մի թրթուն էակ, որը իւր ամբողջ պարզութեամբ և շքեղութեամբ քով վսեմ մեհեանում, քո վեհ անդրիի մօտ խոնարհել է յաւէտ:

— Եյդ իմ հոգին է: Իմ հոգին, որ հաւածւած է եղել բոլորից և ինձնից, իմ մարդկային էութիւնից: Նա յաւէտ մտորել է կեանքում ձգտել է անվերջ, կուել անխոնջ և... յաղթանակի տիրացել: Իմ հոգին գմայլած է քո անդրիի վսեմութեամբ, քո հոգու վեհութեամբ:

Ես կեանքի ուխտաւորն եմ, իմ կուռքը գնել ես, զամբանա՞ քո մեհեանը, աղօթքս քո վեհ հոգուն է ուղղւած...

Երջանկութեան վարկենական զբաւչութեամբ, երբ մենք ձուլւած էինք էութեամբ, հաճոյքի անփոխարինելի վարկեանին, երբ բնութեան մէջ երկու կեանք կար միայն, նա դողդողում էր ամենանուրբ լարի մեռնող ցնցութիւներով: Նա հեծելուառում էր ինձ անծանօթ մի հեծեծանքով:

Եւ ես զգւեցի ինձնից, իմ անսակիւռժից...

դաժան կոշմարը ճնշում էր ինձ և  
ես խարխափում էի անթափանց խաւարում,  
անլուծելի, անիմանալի անորոշութեան մէջ:

—Այլ ես իրաւոնիք չունեմ ստք  
դնել քո մեհեանը, վայ աստւածասպանին,  
նա փրկութիւն չունի... կողոպտեցի քեզ,  
յափշտակեցի քո թանկագին գանձը և զըդ-  
ւելի կերպով շռայլեցի: Այժմ ես աղքատ  
եմ բոլորից, անկարող եմ քեզ տալ այն  
ինչ խլել եմ, ինչ որ դու շարունակ երա-  
զել ես... երջանկութիւն... Քո այդ դող-  
գողոցը, քո այդ հեծկտանքը սնանկացրեց  
ինձ և ես գլորւում եմ այժմ դէպի կորըս-  
տեան անդունդը:

### ՎՈՅԵԼՔ

Մենք նայում էինք իրար, խորը մագ-  
նիսացնող հայեացքով...

—Ի՞նչ ես ցանկանում այժմ... շշնջաց-  
նա:

—Ես... ես ինչ եմ ցանկանում... Ու-  
զնում ես իմանալ:

—Այս...

—Ես ուզում եմ այս վարկեանիս գըր-  
կել քո գնդակահարւած դիակը, լսել քո վեր-  
ջին հառաչանքը. ուզում եմ գնդակահարել  
քեզ ուզիդ ճակատիդ մէջ տեղից և դւար-  
ճանալ քո մահով...

—Օ՛, որքան երջանիկ եմ ես...

## ՀԵԿԵՆԱՆՔ

Նա թութուռմ էր իմ գրկում։ Եւ լեռագար ցնորքների, անիմաստ երջանկութեան արագընթաց վարկենին շշնչում, հեղեկում, զառանցում էր.

— Այնպէս ստակալի է... նախազգուշացումները ինձ չեն խաբի, ես գիտեմ... կլինի... բայց ի՞նձ ի՞նչ... սառը շղթաները հնարաւորնեմ են տանել... Օ՛, շղթաներ... վերցնել բոլորը, բոլորը... յետոյ ճըմընվել... ոչնչացնել... կործանել և բաւակառել... ստանալ անզուսպ, անմիտ բաւանութիւն ստանալ անզուսպ, անմիտ կործանուկանութիւն... սեփական հոգու կործանումնվ...

Եւ մենք վամպիրների պէս շրթունքներով իրար ձուլւեցինք։  
Այդ մեր առաջին համբոյրն էր...

## ԵՐԱԶՆԵՐ, ԱՆՎԵՐՋ ԵՐԱԶՆԵՐ

Կեանքը գեղեցիկ է, գրաւիչ,  
սակայն երազների երջանկութեան չի հասնի ոչ մի կեանք, ոչ մի գրաւչութիւն։

— Իմ երազները անթիւ են, որպէս երկնքի ամպերը, անհամար որպէս աստղերը։ Լսիր, պատմեմ քեզ իմ երջանկութիւնը, ի՞մ երազների դիցունի, իմ անհուն երազական վայելքները։

— Դու դեռ չկայիր, բայց ես երգում էի քեզ, իմ թանկագին լառւրաւ։

— Դեռ քեզ չէի ճանաչում, բայց հոգիս վաղուց ճանաչել էր քեզ և միայն քեզնով էր հրձւում...

— Մենք հանդիպեցինք, որպէս վաղեմի ծանօթներ...

—Մեր հայեացքները սկեռւած էին,  
մենք կարդում էինք իրար հոգի...

—Դու վշաահար էիր՝ ես լալիս էի...  
—Ես հիւանդ էի, դու դալու կ, վշա-

հար...

—Դու ժպտում էիր, ես կենդանութիւն  
էի ստանում...

—Դու հիւանդ էիր, իսկ ես խելազար...

—Մենք ձուլեցինք յաւիտեան, որպէս  
հրատապ հսոցում ոսկու կտորներ անբաժա-  
նելի կերպով...

—Դու պարկած էիր դագաղում, իսկ  
ես խելազարւած, հոգով հիւանդ և մշտն-  
ջենական հառաչանք դարձած:

—Իմ դագաղը յամրաքայլ շարժւում էր  
առաջ, իսկ դու ժպտում էիր...

—Ես տանջւում էի դագաղում, կրծո-  
տում անարին մատներս, իսկ դու ժպտում  
էիր անվերջ:

—Դագաղս հասաւ մթին փոսին, տւե-  
ցիր վերջին հրաժեշտ, ժպտացիր վերջին

անգամ և մուայլ վարագոյրը ծածկեց երազ-  
ներիս երջանկաւէտ աշխարհը.

Մենք բաժանւեցինք յաւիտեան:

## ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԸ

Նա թոշնած դալկահար մերձիման հեռւմ  
էր մահճում, Ոսկեգանգուր վարսերը ան-  
խնամ թափթփւած շոյում էին նրա մար-  
մարեայ դէմքը:

Գլխիկոր յուսահատ կանգնած էի նրա  
մահճի մօտ Հեռւմ էի նրա հետ, տանջւում  
նրա ցաւերով:

—Եյդ դժւք էք, փրկէք ինձ...

Մի վարկեան իմ մտքում կենդանա-  
ցան հազար ու մի յուշեր:

Ցիշեցի մեր առաջին հանդիպումը,  
սրտիս թոթիոը, նրա մտերմութիւնը, նրա  
սիրալիր հայեացքը, նրա միայնութեան սի-  
րահար դառնալը, ապա յաւէտ անյարանում:



Յիշեցի թէ ինչպէս նա խորտակեց իմ  
կեանքը, տւերեց իմ երջանկութիւնը, իւր  
վաղաժամ ձմբան ցըտի պէս սառեցրեց, ողջ  
էութիւնս և գնաց անհեա, գնաց ուրիշ աշ-  
խարհներ գտնելու յոյսով, իսկական երջան-  
կութեան տենչանքով:

Նորից մենք պատահեցինք այժմս, մի  
խուլ անկիւնում նրա մահճի մօտ...

Նա մեռնում է...

— Դուք ուզում էք վրէժ լուծել...  
իսնայէք ինձ, վրկէք յանուն ձեր անցեալի  
յուշերին:

Նրան վրկելու համար մի կեանք պէտք  
էր զոհել և ես իմ կեանքս զոհեցի յանուն  
անցեալի յուշերին:

Կենդանութեան նշոյլով բոցավառւած  
աչերը սքօղած անպատում տիսրութեամբ,  
անթարթ, յառել էր դէմքիս:

Խորհրդաւորութիւնը գրաւիչ էր. համ-  
րացել էինք բոլորս:

— Ենորհակալ եմ Զեղնից, որ Զեր  
կեանքի գնով իմը փրկեցիք...

Կեանքի փոխարէն գերեզմանային սառ-  
նութիւն...

Եւ վրէժինդրութեան անզուսպ որդը  
ակսեց կրծել իմ հոգին, կրծել ուժգին, կա-  
տաղի: Անիծեցի անցեալը, իւր մոայլ յու-  
շերով, անիծեցի ինձ իմ անմիտ ներկան:  
— Ինչու, ինչու չթողեցի մեռնէր, ին-  
չու կեանք տւեցի նորան, նրա սառնու-  
թեանը, հեղնանքին...

Եւ խորտակւած բեկորներումս ծագեց  
վերջին սոսկալի միտքը նոյնպիսի սառնու-  
թեամբ, խորհրդաւոր շեշտով, անյողողող  
ձայնով ասացի.

— Ես իմ վրէժը լուծեցի... Դու իմ  
կեանքը խորտակեցիր, մշտնջենական հա-

ուաչ կնքեցիր իմ երջանկութեան. իսկ ես,  
քո կեսմնքը ազատեցի...

Նա ցնցւեց, սրտաճմլիկ հառաչը դուրս  
թռաւ սրտի խորքից, և երգեց կարապի  
երգը:

—Ես այլ ես չեմ ապրի, որովհետեւ  
դու այդ ես ուզում...

Եւ լոեց յաւիտեան...

Իսկ ես ծնկաչոք, խոնարհւած նրա  
մահճի մօտ, բռնած նրա սառը, անշարժ  
ձեռքը, ողբում էի իմ վրէժը, իմ անցեալի  
յուշերը:

### ԱՆԲԱԺՄՆ ՈՒՂԵԿԻՑՄ\*)

Խաւար փողոցներով տուն էի դառ-  
նում:

Ինձ երկում էր իմ անբաժան ուղե-

\*) Ծանօթ. արտատպած „Էրևանскոյ Ենտ-  
նիկուլից:

կիցս. և որպէս մռայլ ու ստւեր մի ա-  
կընթարթ անգամ չէր հեռանում ինձնից:  
Ես յաճախ սայթաքում էի, ընկնում,  
սակայն ուղեկիցս միշտ բռնում բարձրաց-  
նում էր ինձ: Փողոցները միանգամայն ա-  
մայի էին, բայց ինձ թւում էր թէ հարիւ-  
րաւոր կառքեր աղմկալից գղրդիւնով անց-  
նում էին մօտովս, որոնց արձագանքը սոս-  
կալի ուժով հնչում և տեսում էր գանգիս  
խոռոչում:

Զգիտէի ուր էի և ուր էի զնում:  
Յանկարծ ուղեկիցս բացեց մեր գուոր  
և ինձ ուժով ներս հրեց:

Ազօտ լուսաւորւտծ սենեակում նըս-  
տած եմ սեղանի առաջ, երկաթից ծանր  
զլուխս հենած ձեռքերիս:

Իմ գէմ կանգնած է մռայլ կերպա-  
րանքը իւր անպատում սառնութեամբ: Աչ-  
քերս ամուր խփած, կարծես մտածելու ըն-

գումակութիւնս անգամ կորցրած ես երկար  
ժամանակ արձանացել էի:

Յանկարծ զգացի մի ինչ որ բան հեծ-  
կըլտալով մօտենում է դէպի փակւած աչ-  
քերս: Նայեցի, սթափւեցի: Ոսկեայ շրջա-  
նակի մէջ փայլում էր մի կնոջ դէմք, որի  
տխուր, մռայլւած այտերը ցօղւած էին ար-  
տասուքով: Ես սոսկացի և մեռնող գաղանի  
գայրոյթով, ճիրաններիս մէջ արորելով գրգ-  
գրգեցի ու ոտներիս տակը ձգեցի:

Դա իմ հարագատ մօրս պատկերն էր:  
Ինքնաբաւական նայում էի ցած փշըր-  
ւած շրջանակի բեկորներին և պատառու-  
տած նկարի կտորներին, որոնք կարծես հոգ-  
վարք երերում էին և իրար մօտենում,  
մինչև որ միանալով նորից կազմեցին մի-  
մռայլ յանդիմանութեան բոցը աչերին հրեշ-  
տակատիպ կնոջ կերպարանք:

Ես այլայլեցի, տենդային դողը ցնցեց  
ամբողջ էութիւնս և արիւնակալած աչքե-  
րով մեկնեցի ջղոտ ձեռքո դրան էլ տրորե-

լու ոտներիս տակ յատակի փոշիներում:  
Բայց նա հեռացաւ ինձնից, աչքերը լըցւե-  
ցին զգւանքով և ասաց.

— Զէ որ դու քոյր ունիս... ինչպէս  
յանդկնեցիր... կեղտնտ... Դու պատրաստ  
ես փոշիների մէջ տրորել քո հարազատ-  
ներին անգամ որպէսզի, զգւելի հոգիդ  
կրծող խիղճդ հանգստանցնես: Ես որբացայ  
այլ ես եղբայր չունեմ:

Եւ գնաց, կորաւ յաւիտենական ան-  
յայտութեան մէջ. իսկ նրա տեղը կանգնեց  
աև շրջանակով մի մռայլւած կիսադէմ:

Սև շրջանակը սարսեցրեց ինձ և ապուշ  
կտրելով քարացած մնացի:

— Դու չե՞ս ճանաչում ինձ... և չպէտք  
է էլ ճանաչես... Աւաղ մեռաւ այն արա-  
րածը, որի անմեղ զիմագծերում կարդում  
ես հրեշտակային մաքրութիւն, զրաւչու-  
թիւն, որի աւերակներից միակ մնացած  
յիշատակը, որի կենդանագիրն եմ ես: Նա  
մեռաւ սոսկալի մահով... մեռաւ դարշելի

կեղտում, մատյլ խաւարում: Ես զգւում ե  
յաւէտ երես եմ դարձնում քեղանից... Ու-  
նէիր ամենից թանկաղին գանձը, բայց այժմ  
ամենից աղքատն ես: Վայ քեզ, վայ կեն-  
դանի մեռածիդ:

Նա գեռ երկար, շատ երկար խօսում  
անարգում էր ինձ բայց միզրէնային ցաւը  
սևացրել էր աչքերս և ես ուշաթափւած  
պլորւում էի յատակին: Այդ իմ սեպհական  
նկարս էր, նրա զւարթ դէմքը յաւէտ մռացլ-  
ւել էր և երեսը թեքել, որ այլ ևս երբէք  
չտեսնի դարշահոտ անդունդում հոգևարք  
դագանին:

Միայն իմ յաւիսենական անբաժան  
ուղեկիցը կանգնած էր մօտ իւր գերեզ-  
մանային լոռութեամբ:

---

(Խորհրդաւո՞ր վարագոյրը).

Ամայի ժայռերի, անյատակ անդունդ-  
ների միջով անցնում էր մի կածան: Ան-

մերձենալի լեռների բարձրաբերձ գագաթ-  
ներին փայլում էր յաւիտենական ձիւնը,  
իշխում էր ցըտի մռայլ արքան: Իսկ ցա-  
ծում մշտնջենական կանաչն արփիական  
ճառագայթներով յղփացած շողջողում էր  
հազարագոյն ճաճանչներով: Կպած կնճռոտ  
ժայռի կրծքին, որպէս ցաւատանջ պառաւ,  
երկում էին ամրակուռ տաճարի և երբեմնի  
սիզապանծ ապարանքն մռայլ աւերակները:  
Կածանը երկար էր, սփռւած-ցօղւած  
արիւնով արտասուքով: Զեփիւռը հառաջում-  
տնքում էր այստեղ, անքում յաւիտենական  
մորմոքով: Լեռնաշարքերի խճճւած հան-  
գոյցում կածանը ընդհատում էր մի վա-  
րագոյրով, որի վերայ անսկիզբ հարցականը  
պարթիւական մեծութեամբ, հսկայական վե-  
հութեամբ ու խորհրդաւորութեամբ երե-  
րում էր քամու հարւածներից:

Խորհրդաւոր կածանով գնում էր մարդ-  
կութիւնը գնում անվերջ գարնանային ամ-  
պերի շարքերի պէս: Հասնում էին վարա-

գոյրին. բոլորովին անտարբեր շեղում էին  
ճանապարհը, ընկնում լեռները, և կորչում  
անյատակ անդունդներում։ Երբեմն, երբեմն  
մէկը կամ միւսը զարմացած ապշում էր  
հարցականին նայելով հարցնում։ «Ի՞նչ է  
այս»։ Եւ միշտ վարագոյրի յետեից լսում  
էր «անցիր, անցիր...»։ Եւ բոլորը անց-  
նում էին։

Այդտեղ երեսում էին հարուստներ և  
աղքատներ. հոգեորականներ և աշխարհա-  
կաններ, արհեստաւորներ և զինուորական-  
ներ, ամեն ազգից և ամեն դասակարգից։  
Անցնում էին անտարբեր հարցականին և  
բոլորը վերջին ճիչը արձակելով ընկնում  
էին անյայտ անդունդները, կորչում յա-  
փառեան։

Բայց ահա կածանում երեաց նա,  
մտածկոտ գէմգով, նիհար կազմւածքով,  
վշտի կնիքը ճակատին, տանջանքի հառաջը  
շուրթերին։ Նա քայլում է անտարբեր շըր-  
ջապատին, գդոյշ քայլւածքով, խորագնին

հայեացք ձգելով շուրջը և յաւէտ որոնելով։  
Թէ ի՞նչ է որոնում նա ինքն էլ չգիտէ, սա-  
կայն նրա հոգին միշտ որոնել է անծայր  
ուղիում և որոնում է։ Բոլորը ծիծաղում և  
ծաղրում են։ Նորան հետեւում է մի կին  
յուսահատ գժգոյն, մահւան թախիծը գէմ-  
քին, հազիւ քարշ տալով իր յոգնած սաները։

Նա հասաւ խորհրդաւոր նշանին և ան-  
հուն բերկրանքով յուսահատ աչքերում  
վառւեց երջանիկ յաղթանակ աւետող փայլը  
և նա հաստատուն քայլերով դիմեց գէպի  
վարագոյրը։ Վարանման սարսափի վայր-  
կեանին մի հայեացք ձգեց գէպի իրեն յե-  
տեսող կինը, որը արգէն գնում էր գէպի  
անծանօթ անդունդները և աղերսագին,  
հեալով ասաց։

—Սպասիր, կաց, առանց քեզ ես ան-  
գօր եմ։

Բայց նա չէր լսում, նա գնում էր յու-

սահատ, խորտակւած, սարսափը դէմքին  
հազիւ շարժելով ոտները:

— Անցիր, անցիր... լուռմ էր վարա-  
գոյրի յետեից:

— Երբէք, ես կանգնելու եմ այստեղ,  
այս է իմ կայանը:

— Անցիր, անցիր...

— Ես պէտք է բանամ այս խորհրդաւոր  
վարագոյրը, որ իսկական ուղին սքողել է  
թշւու մարդկութիւնից և ուղղել է նրան  
դէպի կորստարեր անգունդները:

— Անցիր, գնա դէպի անորոշութիւնը,  
դէպի խաւար անդունդը:

— Ո՛չ, ես այստեղ կհիւծւեմ, մարմինս  
կտամ որդերին հողիս հրէշներին և կմեռսեմ  
լոյսի մէջ: Ես որոնել եմ իմ ամբողջ կեան-  
քում, անծայր ուղիի բոլոր խորշերում և  
այժմ պէտք է բանամ այն գաղանիքը, որ  
թագնւած է այս վարագոյրի յետեում:

Փակիր աչքերդ, մի տեսնի, անցիր,  
անցիր...

— Եթէ չբացես վարագոյրը, սքօղւած  
հրէշ, եթէ չհօժարւես ցուցնել ինձ. քո դի-  
մակաւորած դէմքը, ես իմ ձիրաններով  
վերից մինչև ցած կպատռեմ և կտեսնեմ  
այն սոսկալի գաղանիքը, որին տենչացել  
եմ միշտ: Ես իմ ժանիքներով կկրծուեմ  
քո բոլոր գլուխները, հազարգլխեան հրէշ  
և կպատեմ իսկական ուղին քո դաժան  
արգելքից, Բայց, ասում եմ, բայց այդ վա-  
րագոյրը:

Դիւային քրքիջը տեսկան ելևէջներով  
ճնչում է վարագոյրի տակից:

— Դու քրքջում ես, կարծում ես կըսոս-  
կամ, կյաղթահարես իմ անօրինակ յանդըգ-  
նութիւնը, ոչ, ոչ. այլ ես ինձ ոչինչ չի-  
սարսափեցնի:

Հեգրան շարունակում էր քրքջալ, լլա-  
ւում էր ատամների և ոսկրների չըխկ-  
չըխկոցը...

Նա մի փոքր վարանեց. գլուխը կա-  
խեց: Ապա սոսկումով յետ նայեց տեսաւ-

իւր միակ ուղեկցուհուն անդունդի ծայրին,  
ճշաց զայրոյթից, արձակեց կատաղի ունոց  
և խելագարի յանդինութեամբ յարձակեց  
ու վերից վայր պատռեց խորհրդաւոր վա-  
րագոյրը:

Վարագոյրի յետիին կանգնած էր մի  
այլանդակ կմախք, որի աչքի խոռոչներից  
կրակ էր ժայթքում, իսկ ոսկրոտ ծնոտը  
լայն բաց ու խուփ անելով քրջում էր ան-  
ձերջ.

---

### ԿԵԱՆՔԻ ԾԱՂԲԸ\*

Նստած եմ միայնակ անապատային ան-  
սահման ամայութեան մէջ, խորասուգւած՝  
մռայլ խաւարի աղջամուղջի զրկում. նրս-  
տած եմ վշի յաւիտենական կնիքը ճակա-  
տիս, հեծեծանքի հառաչը շուրթերիս:

---

\* Ծանօթ. աբտաստադւած «Բագրի ձայն»-ից.

Իմ դէմ կանգնած է կեանի ծաղրը  
իւր մերկ այլանդակութեամբ և ճիւաղային  
կազմւածքով:

Նա քրքջում է... քրքջում ահոելի աղ-  
մուկով, մահւան սառնութեամբ. դիւային հա  
ճոյքով: Գերեզմանային լռութեան մէջ  
լսում է նրա ժանիքների կրծտոցը և քրքջի  
ելեէջների ծորացող արձագանքը:

Սշխարհը ամայի է, մարդիկ մենաւոր.  
Նրանց միակ յաւիտենական անբաժան ըն-  
կերն է կեանի ծաղրը... Նա քրքջում է  
միշտ, և նրա ծաղրը թունաւորում է մարդ-  
կային կեանքը...

— Գոնէ մի վայրկեան խղճա ինձ, գոնէ  
մի ակնթարթ թող ինձ...

...ինձ պատասխան ծորում է տիեզե-  
րական կեանքի, մշտնջենական ծաղրի ար-  
ձագանքը...

— Օ՛, ես այլ ևս անկարող եմ տանել  
քո թունաւործաղրը: Ես մեռնում եմ թու-  
նաւորւած էութեամբ, ամայի կեանքով...

Լառման ես, եկեղեցու զանգերի մելամաղձուր-  
դողանջը իմ մահուան մեղեղին է երգում.  
գոնէ թող վերջին վայրկեաններս խաղաղ  
անցնեն՝ հանգիստ մեռնեմ:

Դու քրքջում ես...

Եւ մահւան սարսափի մռայլ քօղը,  
կեանքի ոչնչութեան գիտակցութիւնը ցըն-  
ցում է ողջ էութիւնս:

Կեանի ծաղրը քրքջում է անվերջ...

—Գոնէ, ասա ինձ, ինչով կարող է  
մարդը քո դէմ կուել. ո՞րն է քո այլանդակ  
կազմւածքի զգայուն մասը... ասա, կլինի  
մի օր, որ նա ազատւի քո զգւելի ներ-  
կայութիւնից...

Դիւային քրքիջը խլացրեց իմ թոյլ  
նւազ հեծեծանքիս մըմունջները և անորոշ,  
մռայլ խաւարի անծայր ամայութեան մէջ  
պարզ լսուում էր:

—Երբէք..., ես յաւիտենական եմ...

—Թումաւորեցիր իմ կեանքը, թունա-  
ւորեցիր ամբողջ աշխարհի կեանքը, քո

քրքիջը ուղեկցեց ինձ ամբողջ կեանքում,  
ամեն քայլում, մի ակնթարթ անդամ չըխլղ-  
ճացիր ինձ: Երբ ես մոռացած ամբողջ աշ-  
խարհը, կեանքը և ինձ, էութեամբ վեհա-  
ցած և բիւրեղից էլ մաքուր հոգով տառա-  
պում էի, և սէր իմ շրթունքներին մշտըն-  
ջենական քաղցր ժպիտն էր դրոշմել ու ես  
անեղղորդ ձայնով տիեզերական սէրն էի  
ուսուցանում մարդկանց, դու քրքջում էիր,  
քրքջում անվերջ և վերջի վերջոյ թունա-  
ւորեցիր, գարշելի կերպով սեացրիր այդ  
սէրը, որ համայն մարդկութեան սէրն էր:  
Երբ ես մոռացած ամեն ինչ միմիայն ինձ  
էի տեսնում և սողում դէպի վեր, Դու  
քրքջում էիր... հասա անհուն բարձունքին,  
կանգնեցի անսահման բարձրութեան գա-  
գաթին և նայեցի յետ. տեսայ սողուն  
մարդկանց անվերջ կարաւաններ, որոնք  
հետեւում էին ինձ... դարձեալ քո քրքիջը  
թունաւորեց և անտակ անդունդը գլորեց  
ինձ: Դու քրքջում էիր, երբ ճշմարտութիւնը

անվախ խփում էի մարդկանց ճակատին,  
երբ ես նրանց հաւասարութեան էի առաջ-  
նորդում, երբ աւերում կամ կառուցանում  
էի...։ Հոկայական եկեղեցու կամարների  
տակ, մոմի լոյսով խոհնկի բուրմունքով  
շացած-արբեցած՝ երբ Աստւածային խօսքի  
աղերսող ներդաշնակութեամբ սլանում էի  
վեր-բարձր մարդկանցից՝ երկնքի կապու-  
տակ եթերից՝ գարձեալ քո քրքիջն էր, որ  
շամեցրած, ինձ գահավիժում էր այդ անե-  
րեակայելի բարձունքից։ Թէ ճոխ-շուայլ ա-  
պարանքում, թէ մուրացկանի կիսաւեր  
խրճիթում, թէ մարդկային մտքի խաւար  
աղջամուղջում և թէ գիտութեան տաճա-  
րում միշտ և յաւիտեան քո քրքիջն էր ինձ  
ուղեկցում...։

Կեանի ծաղրը քրքջում էր իմ անզօր  
հառաչանքիս, տխուր մահւանս խորհրդաւոր  
վայրկեանին...։

## ԱՐԵՒԵԼ. ՔԻ ԴԱՏԱԿՈՐԸ \*

\* Ծանօթ. արտատպւած «Հորիզոն»-ից.

Դատարանի մռայլ կամարի տակ նստել  
էր նա։ Միտքը պաշարել էին այլանդակ  
մտածմունքներ, հոգին վրդովւած էր։

Դուրսը ամեն ինչ արտասովոր էր. քա-  
մին ոռնում էր վիրաւոր գաղանի պէս, ամ-  
պերը անզուսպ լալիս էին և աարերքները  
կարծես իրար էին խառնւել... բոլորը կար-  
ծես յուզւած էին, մի այլանդակ. հրէշներին  
յատուկ յուզումով իսկ նա գատաւորը՝ մտա-  
խոհ էր և կարծես անտարբեր շրջապատին։  
Ոչ ոք չգիտէր ուրախ էր նա թէ տխուրք  
նրա թիկունքին կանգնել էր Գեւը խժոխքի,  
չարութեան և մահւան այլանդակ ոգին,  
Սեւ սատանան։ Նա էլ էր յուզւած։ Նրա  
սաթից սև այտերի վերայ երկում էին ար-  
ցունքի ցօղեր և մերթ ընդ մերթ շարժում  
էր նա իր ցից եղջիւբները կամ երկար  
պոչը։ Երբեմն բանում էր իր սոսկալի երախը  
և կաթից սպիտակ ատամները շարժում։  
Կարծես ուզում էր խօսել բայց խկոյն շըր-  
թունքները սեղմւում և խանգարում արգե-

լում էին։ Միայն ճռեկն էր անտարբեր իր մշտնջենական ճռոցը անընդհատ ծորացնում։

Օրը խորհրդաւոր էր, խորհրդաւոր էր վայրկեանը։ Մեծ էր խորհրդաւորութիւնը, որովհետև այդ օրը պէտք է դատէին մեծ ոնրազործին ամբողջ աշխարհի համար պատուհաս դարձած հրեժին։

Վայրկեանները գլորւում էին, քամին ոռնում էր, Դեւլ լուս արտասւում, իսկ դատաւորը կարծես թէ ննջում էր... Լոռւթիւնը սոսկալի էլ...

Գերջապէս երկար ժամանակ բերանը բաց ու խուփ անելուց յետոյ դատարանի խորհրդաւոր լոռութիւնը խզեց Դեւլ։

—Դատաւոր...

Դատաւորը յետ նայեց, և տեսաւ արտասւող Դեւն, ժպտաց և ասաց,

—Դժու ես Դեւ, իմ մտերիմ բարեկամ, ինչու ես եկել, առանց քեզ էլ այս օրը շատ խորենդաւոր է...»

—Յուզումս անչափ է, սարսափիս ահուեկի... ես եկել եմ մեծ կորուստս՝ մարդու հոգին գտնելու...»

Դատաւորը բըջաց, կամարները արձագանք տւին և ճռեկը մի պահ լոելուց յետոյ շարունակեց իր յափտենական ճռոցը։

Յանկարծ կամարները սկսեցին դպրուդալ ծանր շղթաների զօղանջման արձագանքով։ Դոները լայն բացւեցին և զինուորները ներս բերին գաղանի պէս կապկապւած մէկին։

Դատաւորը կարծես սթափւեց, կոստրասեց մատները, ժպտաց, վերցրեց զբիչը և զիմեց նրանց։

—Զարագործ, կամ աւելի ճիշտ հրէշ։

—Վայրանունդ

—Աւազակութիւն...

—Եսկ ովէ քեզ ծնել, ծնողներդ...

—Եարիքն ու վիշտը, ցաւն ու տաննջանքը, բախտի հարւածը, արհամարանքը, քաղցածութիւնը, աղքատութիւնը, քո օրէնք...

ները... և վերջապէս տղիսութեան մռայլ  
խաւարը... կեղար... կեղտը...

Դատաւորը ժպտած, ճռեկը լոեց կար-  
ծես աւելի լաւ լսելու համար, իսկ Դիք  
սոսկաց:

—Ի՞նչ է յանցանքդ:

—Մարդասպանութիւն, առևանգում,  
գողութիւն, գաղանութիւն, հրդէն, մի խօս-  
քով այն բոլոր յանցանքները, որ գործում  
են կեղաի ծնունդները:

—Բնկերներդ:

—Մարդիկ, Աստծոյ պատկեր կրող ա-  
րարածները: Ես բոլորն ասացի այլ ես ոչինչ  
չունեմ ասելու:

Դատաւորը նորից ժպտաց մի սուր  
հայեացք ձգեց դատապարտեալի վերայ և  
ասաց:

—Ռւդում ես ապրել:

—Կեանքից ձանձրանալ չգիտեմ երբէք.  
Բայց կան սահմաններ և կեանքի համար—  
հասար սահմանին արդարութիւնը, օրէնքը

կամ մահը կստիպեն կանդ առնել:

—Ինձ թւում է թէ կարող ես ապրել.  
անմիտ է փիլիսոփայութիւնդ:

—Իրաւունք ունես կատակ անելու նրա  
կեանքի հետ, որը շատ կեանքեր ծաղրի է  
ենթարկել կատակով կարձել:

Դատաւորը ուղղւեց, ստացաւ լուրջ  
կերպարանք և ասաց

—Ես երբէք կատակով գործ չեմ արել.  
նորից կրկնում եմ դու կարող ես ապրել,  
միայն պաշտպաններ են հարկաւոր, ուժեղ  
պաշտպաններ... հասկացմը—պաշտպաններ:

Զարագործը ցնցւեց, կեանքի, ապրելու  
յոյսը ոգեսորեց նրան:

—Եթէ համոզւեմ, որ մարող կեանքս  
կարող եմ խլել մահւան ճանկերից, իսկոյն  
կգտնեմ պաշտպաններ...

—Միանգամայն կարող ես հաւատալ:  
Վերջացրեց խօսքը դատաւորը: Դատա-  
պարտեալին գուրս տարան և ահոելի տ-  
մայութեան մէջ ճռեկն էր որ անտարբեր  
ճռում էր:

Դեղ սոսկաց, հազիւ կարողացաւ իրեն  
պահել, որ մարած վայր չընկնէր։ Ուզում  
էր խօսել, ուզում էր մի բան ասել, բայց  
կարկամածի պէս հազիւ բերանը բաց ու  
խուփ էր անում և որովայնային ձայներ  
հանում։

—Դատաւո՞ր... վերջապէս գոչեց նա  
և ցնցւեց սոսկումից։

—Լոիր։ Դեռևէ, սուս...

—Քեզ չեմ հասկանում։

—Դու կարճամիտ ես, քիչ էլ համբերիր,  
և կիմանաս, որ Մարդը աւելի է հասկա-  
նում քանց դժոխքի դեւերը։ Լոիր, Դե, լոիր  
և ուշադրութեամբ լսիր։

Դարձեալ տիրեց խորհրդաւոր լուս-  
թիւն, դարձեալ ճպուռի միալար ճռոցն էր  
լսւում։ Դատաւո՞ր ինչ որ խաղմզում էր  
թղթի վերայ և կարծես ինքնամուացու-  
թեան մէջ էր ընկել։ Վերջապէս նա սթափ-  
եց և հրամայեց ներս թողնել բողոքող-  
ներին։

Նորից դռները լայն բացւեցին և թշշ-  
ւառների, ճնշւածների, հալածւածների լա-  
ցող ամբոխը, խառնիխուռը, իրար հրելով  
ներս թափւեց և համարեա բոլորը միասին  
վայնասուն բարձրացնելով աղաղակեցին։

—Պատիւս, անմեղ գուսարս, արդար  
դատ... Աղաղակում էր մի զառամեալ և աղ-  
քատութեան ու սովի ճիրաններում հիւծ-  
ւած ծերունի։

—Ամուսինս, հինգ որբիկներիս հայրը...  
արդարագատութիւնն... ճշում էր մի կին-  
քոնած հինգ կիսամերկ ու քաղցից մա-  
րող մանուկների։

—Օ՛ մեռնում եմ... հազիւ շշնջում էր  
մի վիրաւոր։

—Որդոցս ու ամուսնուս արի մնը...  
հաց, հաց տուր, մենք էլ ասլրել ենք ու-  
զում...»

Դատաւորը մի վայրկեան շփոթւեց,  
բայց իսկոյն ընդունեց իւր նախկին գիրքը  
և ասաց։

— Հոէք, ես գիտեմ բոլորը, միայն ա-  
սէք, ունէք պաշտպաններ և մվրեր են:

— Մեր պաշտպանը Աստւած է, արդա-  
րութիւնը և դժւ, համարեա միարերան գո-  
չեցին բոլորը:

Դատաւորը քթի տակ ծիծաղեց և ա-  
սաց «Եղել են արդեօք այդպիսի պաշտպան-  
ներ...»: Եւ հրամայեց բոլորին դուրս գնալ,  
խոստանալով անել այն, ինչ որ արդարա-  
դատութեան պաշտպանը կպահանջէ:

Հիւծւածների կոյտը, արդարութեան  
յոյսով շարժւեց գէպի դուռը, իսկ դատա-  
ւորը ինգրում էր նրանց յետեից. հետզհետէ  
ձայնը բարձրացնելով, այնպէս որ, դեռ նոր  
էր դուրս եկել թշւառների ամբոխը, որ նա  
բարձրածայն քրքջում էր:

— Ես սարսափնամ եմ քեզանից, ես  
սարսափնամ եմ քո քըքջից... թոթովեց  
Գեւը և վտակներով արցունքը սկսեց հոսել  
նրա մթագնած սկ այտերի վրայով:

— Հա հա հա, դու սարսափնամ ես Դե,  
արտասանամ ես... սպասիր սպասիր:

Մարմնացած թշւառութիւնը յուզել էր  
բոլորին: Նոյն իսկ դժոխքի Դեը. որ շա-  
րունակ ստիպել էր մարդկանց չարիքներ  
գործել և հրճւել էր, որի էութիւնը իսկըդ-  
բանէ չար էր, այդ օրւայ պատկերից մարդ-  
կային կեանքի մռայլ կոչմարից յուզւել և  
արտասառւմ էր: Միայն դատաւորը և խո-  
նաւ ճեղքում միտլար ճշող ճռեկը ան-  
տարբեր էին:

---

Նորից, շղթաները շառաչելով, ներս  
մտաւ Զարագործը:

Դատաւորը հրամայեց զինորներին  
դուրս գնալ: Եւ դառնալով գէպի Զարա-  
գործը հարցրեց.

— Գամը պաշտպաններ:

Զարագործը շղթայած ձեռքը տարաւ  
գէպի կուրծքը հանեց այստեղից մի քսակ  
և դատաւորի գէմ, սեղանի վերայ դրեց  
փայլուն ոսկիների անթիւ մի քանակ:

—Այսչափ պաշտպաններ ոչ ոք չի ու-  
նեցել և եթէ ազատւեմ նոյնչափ էլ կըս-  
տանաս...

—Կեցցես, գոչեց գատաւորը և համ-  
բուրեց նրա ճակատը. Ապա գրպանից հա-  
նեց մի բանալի, արձակեց նրա շղթաները,  
և երբ թևանցուկ արած ուզում էր դուրս  
գնալ, մարելով ճշաց ՚Ի՞ւլ.

—Կաց...

—Ի՞նչ ես ուզում, ժպտալով հարցրեց  
դատաւորը.

—Սարսափում եմ, ասա, ինչ արարած  
ես դժւ.

Ես մարդ եմ. Ասսծու պատկերը կրող  
մարդ:



«Շնորհիւ այն հանգամանքին որ հնարաւորութիւն չիմ ունեցել ինքս սրբազրել, սպրդել են սխալներ, որոնցից աւելի աչքի են ընկնում հետևեալները»

երես	տող	սխալ	ռւդիդ
14	6	վերից	նախազգուշացները
			ցումները
26	4	ցածից	դէմքով
			դէմքով
39	7	ցած, տողից վեր բաց է թող.	Անժնդ...
40	3	վերից	ժպտած
44	10	ցածից	ժպտաց
			ինդումէր

Կան սպրդած նաև կետերի սխալներ, որոնք հնարաւոր չեն վրիպակում զետեղելք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0330435

25615

ԳԻՆՆ է 10 կ.

Վաճառւում է նաև հեղինակի  
ԳՐՉԻ ՄԱՐԴԻ. կեանքի դրամայ 3 դործ.

ԳԻՆՆ է 20 կ.

ԵՄ մօտական նասցեն

Էրивան մագազին Ա. Ա. Սա-  
րաջյան Գյոլխանձնանու.